



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 6

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝
2018 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 7-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

- 1) 2017-18 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:
- 2) ԵՊՀ աշխատավարձերի հավելյալ վճարումների կանոնակարգում հաշվարկների փոփոխություն կատարելու առաջարկի քննարկում:
- 3) Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի հաշվետվությունը:
- 4) ԵՊՀ 100-ամյակին ընդառաջ միջոցառումների առաջարկների քննարկում:
- 5) Ընթացիկ հարցեր:

Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը գիտխորհրդի մասնակիցներին տեղեկացրեց, որ խորհրդի 25 անդամներից նիստին մասնակցում է 21-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Դեկանն այնուհետև ծանոթացրեց նիստի օրակարգի հարցերին, որոնք միաձայն ընդունվեցին բաց քվեարկությամբ:

1-ին հարցի առիթով (2017-18 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում) պրոֆ. Ա. Ավագյանը հաղորդման ձայնը տվեց դեկանի տեղակալ դոց. Ա.

Սարգսյանին: Վերջինս ամփոփ ներկայացրեց քննաշրջանի պատկերը՝ մասնավորապես նկատելով, որ այժմ լուծարքային շրջան է, իսկ բուն քննաշրջանն ընթացել է բնական հունով, և արտառոց դեպքեր չեն գրանցվել. բակալավրիատում պարտք ունեցողները 179 ուսանողներ են, որից՝ 2-12 կրեդիտ (162), 13-15 (17), մինչև 30 քիչ են: 1 ուսանող ուսման վարձը չվճարելու պատճառով հեռացվել է համալսարանից: Վիճակն անհամեմատ լավ է մագիստրատուրայում, ուր պարտք ունեցող և ուսման վարձը չվճարած ուսանողներ չկան:

Ֆակուլտետի դեկանը ամբիոնների վարիչների ուշադրությունը հրավիրեց քննական տոմսերի հաշվարկների վրա: Նա իր մտահոգությունը հայտնեց որոշ ուսանողների կողմից կեղծ քննատոմս օգտագործելու և դրանով պատասխանելու փորձ կատարելու առիթով: Դեկանը հատուկ զգուշացրեց, որ նման երևույթի կրկնվելու դեպքում ամբողջ պատասխանատվությունն այսուհետ կընկնի համապատասխան ամբիոնի վարիչի և քննություն անցկացնող դասախոսի վրա:

Օրակարգի **2-րդ հարցը**, որը վերաբերում էր ԵՊՀ աշխատավարձերի հավելյալ վճարումների կանոնակարգում հաշվարկների փոփոխություն կատարելու առաջարկին, առաջացրեց բուռն քննարկում: Այդ առիթով ելույթ ունեցան պրոֆ., պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ս. Մուրադյանը, Ժ. Քալանթարյանը, Ալ. Մակարյանը, դոց., դոց. Ս. Գրիգորյանը, Ա. Ջրբաշյանը և այլք:

Նրանք նշեցին, որ Հայաստանի Հանրապետության ԿԳՆ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից հաստատված ցուցակը սահմանում է այն պարբերական հրատարակությունները, որոնցում տպագրված հոդվածները համարվում են ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների ամփոփումն իրականացնող աշխատություններ: Ըստ այդմ՝ ՀՀ-ում թյուրիմացաբար գիտական հրատարակություն չեն համարվում հանրապետական ու միջազգային գիտական կոնֆերանսների նյութերն ամփոփող ժողովածուները և ուսումնասմթողական ձեռնարկները: Մինչդեռ թե՛ Խորհրդային Միությունում և թե՛ անկախության առաջին շրջանում ընդունված է եղել այնպիսի կարգ, որը ներկայումս գործում է քաղաքակիրթ ամբողջ աշխարհում. եթե գիտական նստաշրջանի նյութերն ամփոփող ժողովածուն ներկայացնում է միայն ընթերցված զեկուցումները կամ դրանց թեզիսները, ապա դրանք չեն համարվում գիտական հրապարակում, իսկ եթե դա զեկուցումների հիման վրա

գրված ծավալուն, գիտական անհրաժեշտ ապարատով օժտված հոդվածների ժողովածու է, որն ունի խմբագիր, ստացել է տվյալ գիտամանկավարժական ստորաբաժանման գիտական խորհրդի երաշխավորությունը, այդպիսի ժողովածուի հոդվածները համարվում են պարբերական հանդեսներում լույս տեսած հոդվածներին համարժեք գիտական հրապարակումներ: Ասել է թե՛ դրանք գիտական հրապարակումներ չհամարվելու և չարժևորվելու պարագայում հիշյալ հրապարակումները վերածվում են ավելորդության, ավելին, գիտության զարգացումը խթանողից դառնալով կաշկանդող, խանգարող գործոն: Դրանով ըստ էության խստորեն նվազեցվում է գիտությամբ զբաղվելու շահագրգռությունը: Փաստորեն, ստացվում է այնպես, որ գիտական աշխատանքը պետականորեն չի խրախուսվում:

Հիշյալ ժողովածուներում ընդգրկված նյութերը՝ արդեն որպես հոդվածներ, գիտական նստաշրջանում կարդացված զեկուցման համալրված, գիտական ապարատով հագեցած, հարցադրումները համոզիչ պատասխաններով ներկայացնող գիտական ընդհանրացնող խոսք են: Հարց է առաջանում՝ գիտությամբ զբաղվողներն իրենց աշխատանքի համար չպիտի՞ խրախուսվեն: Այս խնդիրը պետք է լրջորեն քննարկեն վերադաս մարմինները և կայացնեն խելամիտ որոշում, եթե իրոք մտածում են Հայաստանի Հանապետության գիտության զարգացման մասին:

Նույն իրավիճակն է նաև ուսումնական ձեռնարկների պարագայում: Հաճախ է պատահում, երբ դրա հեղինակը, ստեղծելով մենագրությանը համարժեք գիտական լրջմիտ աշխատություն, պարզապես ընդառաջելով ուսանողության ցանկությանը և հաշվի առնելով նյութը մատչելի ներկայացնելու պահանջը, այն հրատարակում է իբրև ձեռնարկ՝ վերջնահաշվում զրկվելով գիտական աշխատության հեղինակի շնորհից:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն.- 1) Վերոնշյալ թյուրիմացությունները վերացնելու նպատակով դիմել ԵՊՀ գիտխորհրդին՝ միջնորդելու ՀՀ ԲՈՀ-ին, որ խորհրդային տարիներին և անկախության շրջանում անցկացված գիտական նստաշրջանների նյութերն ամփոփող հոդվածների ժողովածուները համարվեն գիտական հրատարակություններ:

2) Առաջարկել ուսումնական ձեռնարկների նկատմամբ դրսևորել տարբերակված մոտեցում՝ խրախուսելով գիտական լուրջ արժեք ներկայացնող հրատարակությունները:

3) Որպես գիտական հոդվածներ համարել և համապատասխանորեն վճարել՝

«Չարենցյան ընթերցումներ», 10 գրքեր (1973-2017)

«Մաթևոսյանական ընթերցումներ», 3 գրքեր (2006-2016)

«Քրիստոնեությունը և հայ գրականությունը» (2001)

«Նիկոլ Աղբալյան» (2006)

«Համաստեղ» (2008)

Գիտխորհրդի նախագահ Ա. Ավագյանը, անցնելով **օրակարգի 3-րդ** հարցին, գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի տարեկան հաշվետվության համար ձայնը տվեց ամբիոնի վարիչ դոց. Ա. Ջրբաշյանին: Վերջինս մասնավորապես զեկուցեց հետևյալը.

- Ամբիոնի դասախոսները, ուսումնամանկավարժական աշխատանքից բացի, իրենց ակտիվ մասնակցությունն են բերում հանրապետության գիտական կյանքին: Հաշվետու ժամանակաշրջանում նրանք տպագրել են տասնհինգից ավելի գիտական հոդվածներ, ընդ որում՝ ոչ միայն Հայաստանում, այլև Ռուսաստանում և Կանադայում (Տորոնտո): Լույս է տեսել Ժ. Քալանթարյանի «Քննադատությունն իբրև գործնական գրականագիտություն» ուսումնական մեծածավալ ձեռնարկը, որն ամփոփում է քննադատության տեսության և մեթոդաբանության կարևորագույն հարցադրումներ: Տպագրվել է Ա. Ջրբաշյանի կողմից հայերեն թարգմանված՝ ժամանակակից ռուս գրականագետ Օլգա Տուրիշևայի «Արտասահմանյան գրականագիտության տեսությունը և մեթոդաբանությունը» ուսումնական ձեռնարկը պրոֆ. Ժ. Քալանթարյանի խմբագրությամբ:

Ամբիոնում մշտապես թարմացվում և արդիականացվում են մագիստրոսական դասընթացները՝ հարմարեցվելով ժամանակակից գրականագիտության պահանջներին:

Ամբիոնի անդամները մշտապես մասնակցում են հանրապետական և ֆակուլտետային գիտաժողովներին: Նրանցից 3-ը զեկուցումներով հանդես են եկել «Չարենցյան ընթերցումների» հերթական տասներորդ գիտաժողովին, Ա. Բեքմեզյանը՝ «Ավետիս Ահարոնյան» գիտաժողովին: Պրոֆ. Մ. Ջանփոլադյանը մասնակցել և զեկուցումներ է կարդացել «Բյուրուսովյան ընթերցումներ», «Հայկական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը» միջազգային գիտաժողովներում, նաև հեռակա մասնակցություն է ունեցել Մոսկվայի Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտի միջազգային գիտաժողովին,

որի նյութերը տպագրվել են Մոսկվայում: 2017թ. պրոֆ. Ժ. Քալանթարյանը պարզևատրվել է Ֆրիտյոֆ Նանսենի մեդալով:

Ամբիոնի դասախոսները շարունակաբար ղեկավարում են ասպիրանտներ և հայցորդներ: 2017 թ. ղեկտեմբերին տեղի ունեցավ ամբիոնի առկա ասպիրանտ Դիանա Մնացականյանի ատենախոսության հրապարակային պաշտպանությունը: Իբրև առանձին մենագրություն՝ ատենախոսությունը ամբիոնի կողմից երաշխավորվել է տպագրության:

Ամբիոնի աշխատանքը բարձր է գնահատվում նաև ուսանողների կողմից՝ մշտապես արտացոլվելով սոցիալական տարեկան բարձր արդյունքներում:

Շնորհակալություն:

Գիտխորհուրդը գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի տարեկան աշխատանքը միաձայն գնահատեց դրական:

Գիտխորհրդի օրակարգի **4-րդ հարցի** առիթով (ԵՊՀ 100-ամյակին ընդառաջ միջոցառումների նախապատրաստություններ) պրոֆ. Ա. Ավագյանը հանձնարարեց բոլոր ամբիոնների վարիչներին ըստ արժանվույնս նախապատրասվել ԵՊՀ հոբելյանական միջոցառումներին:

Ընթացիկ հարցերում՝

ԼՍԵՑԻՆ.- Ռոմանագերմանական և արևելագիտական ֆակուլտետների բակալավրիատի նոր ծրագրերից գրականագիտություն, հայ գրականություն և հայ նորագույն գրականություն առարկաների կրճատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ., պրոֆ. Ս. Մուրադյանը, Ժ. Քալանթարյանը, Ալ. Մակարյանը, դոց., դոց. Ա. Ջրբաշյանը, Ս. Գրիգորյանը:

Նրանք նշեցին, որ ռոմանագերմանական բանասիրության և արևելագիտության ֆակուլտետներում ԵՊՀ հիմնադրման ժամանակներից՝ շուրջ հարյուր տարի, դասավանդվել են գրականագիտություն, հայ գրականություն և հայ նորագույն գրականություն առարկաները, որոնք մեծապես նպաստել են ուսանողների գրականագիտական գիտելիքների, գրական երկի վերլուծության հմտությունների զարգացմանը, նրանց ազգային դաստիարակությանն ու հոգևոր հարստացմանը: Ըստ մեզ հասած ստույգ լուրերի՝ բակալավրատի նոր ծրագրերի մշակման ընթացքում 2018-2019թթ. ուստարվանից նշված առարկաները

դուրս են թողնվելու ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի (բացի թարգմանչական բաժնի) և արևելագիտականի դասընթացներից, ինչը լուրջ մտահոգության առիթ է տալիս:

Դեմ չենք ուսումնական գործընթացը կատարելագործելուն նպատակամիտված վերակառուցումներին, սակայն վճռաբար դեմ ենք գործող կառույցները հիմնավորապես քանդելուն և համալսարանական կրթությունը ազգային բովանդակությունից զրկելուց:

ԵՊՀ հիմնադիրները չէին կարող մտածել, որ հետագայում արևելագիտական ֆակուլտետից պիտի հայ գրականության դասաժամները փոխարինվեն Բելուջիստանի բռնների բարբառների յուրահատկությունների ուսումնասիրությամբ, իսկ ռոմանագերմանական ֆակուլտետում օտար լեզուների ուսուցման և հաղորդակցության նորագույն մեթոդները կգերադասեն հայ գրականությունից:

Չպետք է մոռանանք, որ մինչև վերջին տասնամյակները դրանք բանասիրական ֆակուլտետի կազմում էին, համալսարանը հաջողությամբ պատրաստում էր արևելագետներ, օտար լեզուների և գրականության հայ մասնագետներ:

Այսօր մեր արևելագետներն իրենց վրա են վերցրել Թեհրանի համալսարանի, իսկ ռոմանագերմանականի ընկերները՝ Սորբոնի, Բեռլինի, Լոնդոնի և ամերիկյան համալսարանների գործառույթները: Այնինչ ԵՊՀ-ն մասնագետներ պետք է պատրաստի ՀՀ ներքին և արտաքին գերատեսչական ու դիվանագիտական ոլորտներում աշխատելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ. - ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից դիմել ռեկտորատին՝ միջնորդելու նշված առարկաները ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում չկրճատելու համար:

Լ Ս Ե Ց Ի Ն - Հայ բանասիրության ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» բաժնի առկա ուսուցման բակալավրիատի հետևյալ ուսանողներին՝ Պողոսյան Արշակ Անդրանիկի, Ճաղարյան Լուսինե Արթուրի, Իսրայելյան Օվսաննա Սեդրակի, Ծատուրյան Լիլիթ Հմայակի կրթաթոշակ տրամադրելու հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն - Պրոֆ., պրոֆ. Ա. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Վ. Սաֆարյանը, Յու. Ավետիսյանը և այլք:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Տրամադրել ներքոհիշյալ ուսանողներին կրթաթոշակ՝

- Պողոսյան Արշակ Անդրանիկի՝ «ԵՊՀ-ի անվան» կրթաթոշակ - հայ բանասիրության ֆակ., 3-րդ կուրս
- Ճաղարյան Լուսինե Արթուրի՝ «Ստեփան Ալաջաջյանի անվան» - հայ բանասիրության ֆակ., հ.լ. 3-րդ կուրս
- Իսրայելյան Օվսաննա Սեդրակի՝ «Գրիգոր Նարեկացու անվան» - հայ բանասիրության ֆակ., 4-րդ կուրս
- Ծատուրյան Լիլիթ Հմայակի՝ «Մեսրոպ Մաշտոցի անվան» - հայ բանասիրության ֆակ., 4-րդ կուրս

ԼՍԵՑԻՆ.- Հայ նորագույն գրականության ամբիոնի հեռակա ուսուցման առաջին տարվա ասպիրանտ Մանե Հովհաննիսյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Պրոֆ. պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ա. Ավագյանը, Ժ. Քալանթարյանը:

Ատենախոսության թեմա առաջարկվեց «Համաստեղի պատմվածքների ժանրային տիպաբանությունը»:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել

1. Մանե Հովհաննիսյանի ատենախոսության թեման՝ «Համաստեղի պատմվածքների ժանրային տիպաբանությունը»:
2. Գիտական ղեկավար՝ բան. գիտ. թեկն., դոցենտ Սեյրան Գրիգորյանին:

ԼՍԵՑԻՆ.- Հայ նորագույն գրականության ամբիոնի հեռակա ուսուցման առաջին տարվա ասպիրանտ Լիլիթ Գասպարյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Պրոֆ. պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը Բ. Գ. Թ., դոց. Ս. Գրիգորյանը:

Ատենախոսության թեմա առաջարկվեց «Զորայր Իսալափյանի վիպագրության պատումի առանձնահատկությունները»:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել

1. Լիլիթ Գասպարյանի աստենախոսության թեման՝ «Զորայր Խալափյանի վիպագրության պատումի առանձնահատկությունները»:

2. Գիտական ղեկավար՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Գաբրիելյանը:

Գիտական խորհրդի նիստի վերջում նախագահ Ա. Ավագյանը շնորհակալություն հայտնեց բոլոր ներկաներին և նիստը համարեց փակված:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ